Հաշվետվություն

2017թ. հուլիսի 16-ից 18-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած աշխատանքային այցի վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Դավիթ Տոնոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (պատվիրակության կազմը կցվում է)

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Վրաստան (Թբիլիսի), 2017թ. հուլիսի 16-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը**

   Վրաստանի ներքին գործերի նախարար Գեորգի Մգեբրիշվիլի

5. **Գործուղման նպատակը**

   Երկկողմ հարաբերությունների խորացման և համագործակցության ընդլայնման, աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված համատեղ միջոցառումների վերաբերյալ հարցերի քննարկում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի կատարած աշխատանքային այցի շրջանակներում 2017թ. հուլիսի 17-ին հանդիպում եմ ունեցել Վրաստանի ներքին գործերի նախարար Գեորգի Մգեբրիշվիլիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- երկու երկրների միջև համագործակցության խորացման և ընդլայնման հարցերը,

- արտակարգ իրավիճակների, աղետների կանխարգելմանն ու չեզոքացմանն ուղղված հիմնախնդիրները,
- արտակարգ իրավիճակներին արձագանքման միասնական մոտեցման մշակման կարևորությունը,
- աղետներից բնակչության պաշտպանության ոլորտում տեղեկատվության և տեխնոլոգիաների օպերատիվ փոխանակման կարևորությունը,
- երկու երկրների տարածքում մայրուղիների անխափան աշխատանքի կարևորությունը և արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ համատեղ միջացառումների իրականացումը,
- համատեղ վարժանքների մասնակցություն, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ:

Վրաստան կատարած այցի շրջանակում այցելել եմ Վրաստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների կառավարման գործակալություն: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- Վրաստանում կիրառվող հրշեջփրկարարական տեխնիկայի և հատուկ սարքավորումների բնութագրերը,
- միջազգային կազմակերպությունների օժանդակությունը հրշեջփրկարարական տեխնիկայի և հատուկ սարքավորումների ձեռքբերման գործում,
- Վրաստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության աշխատակիցների կրթական և վերապատրաստման ծրագրերը:

Աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել եմ նաև Վրաստանի կրթության նախարարության Երկրի և ազգային սեյսմիկ պաշտպանության ինստիտուտի ներկայացուցչի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայության և Վրաստանի համապատասխան կառույցի միջև համագործակցության զարգացման հնարավորությունները,

- մասնակցությունը միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող նախագծերին և միջոցառումներին, այդ թվում՝ վերապատրաստումներին և դասընթացներին:

Վրաստան կատարած այցի շրջանակում այցելել եմ նաև Վրաստանի ՆԳՆ համատեղ օպերացիաների կենտրոն: Հանդիպման ընթացքում քննարկվել են՝

- կենտրոնի գործունեության ռազմավարությունը և հիմնական գործառույթները արտակարգ իրավիճակների պայմաններում,
- կենտրոնի տեխնիկական և ծրագրային ապահովվածությունը և սերվերային համակարգի հզորացման անհրաժեշտությունը,
- 112 ծառայության հիմնական ուղղությունները:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայամանավորվածություններ, մասնավորապես՝

- համատեղ վարժանքների անցկացում,
- արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության օպերատիվ փոխանակում և անհրաժեշտության դեպքում համատեղ միջացառումների իրականացում,
- համագործակցության ընդլայնում ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայության և Վրաստանի համապատասխան կառույցի միջև:

8. Առաջարկությունները

Հանդիպումների ընթացքում հանդես եմ եկել մի շարք առաջարկություններով՝

- հայ-վրացական անդրսահմանային համագործակցության զարգացում՝ ուղղված բնական և տեխնածին աղետների կանխարգելմանը, համատեղ և արդյունավետ արձագանքմանը, ինչը կնպաստի երկու պետությունների բնակչության աղետներին դիմակայունության բարձրացմանը,

- երկու երկրների արտակարգ իրավիճակների ոլորտի մերձսահմանային ստորաբաժանումների միջև կայուն կապերի հաստատման անհրաժեշտություն և նրանց մասնակցությամբ համատեղ միջոցառումների անցկացում, այդ թվում՝ միջազգային կառույցների հովանու ներքո,
- արագ և արդյունավետ որոշումներ կայացնելու համար առաջարկել եմ իրականացնել տեղեկատվության օպերատիվ փոխանակում արտակարգ իրավիճակների վերաբերյալ,
- ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և Վրաստանի ՆԳՆ համատեղ օպերացիաների կենտրոնի միջև մշտական արդյունավետ կապի հաստատում,
- աղետների արձագանքման համատեղ համակարգի ձևավորում,
- ՀՀ ԱԻՆ մեթոդաբանական և գործնական աջակցության ցուցաբերում վրացական փրկարարական թիմին՝ INSARAG չափանիշներին համապատասխան որակավորում ստանալու համար,
- վրացական կողմին հրավիրել եմ մասնակցելու ս.թ. օգոստոսին Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպվող Գոգավան սահմանային անցակետում կազմակերպվող վարժանքին,
- հրավիրել եմ մասնակցելու նաև ս.թ. սեպտեմբերի 2-ից 4-ը Երևանում կայանալիք «Arm Security» անվտանգության բարձրագույն տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին:

9. Գործուղվողը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

20.07.2017թ.